ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
7	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ	գրասեղաններ	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Գրասեղան, չափսերը՝ 1200 x 600 x 760 մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար օգտագործվի 18 մմ հաստությամն լամինացված E0 դասի ՓՏՍ : Աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն համապատասխան հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Գրասեղանի առջևը փակվում է 18 մմ հաստությամբ նույն E0 դասի ՓՏՍ դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164 x 450 x 600 մմ, և որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար ու ամրանումում է աշխատանքային հարթության եզրին(տակից) և կողապատերի(ոտքերի) ներսի մասին:

				Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570 մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը շրջափակվեն համապատասխան հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին ամրացվի ոտիկներ՝ 5-6 մմ բարձրությամբ: Գրասեղանի աշխատանքային հարթության վերևի աջ կամ ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար տեղակայվի միջանցիկ անցք՝ տեղակայված փակվող խցաններով՝ ըստ գծագրի: Գրասեղանը ունի առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x590 մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 140,140,270 մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող,դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ, որակյալ սահնակներով (սալյասկա): Գրասեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պոլիմերային եզրաժապավենները նույն՝ բնափայտի գույնի, բաց երանգի: Դարակները ունեն օվալաձև մետաղական բռնակներ, որոնց երկարությունը 100 մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Աշխատանքները կկատարվեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, ողորկ, առանց ծլեպների, անհրաժեշտության դեպքում լաքապատված (էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով): Լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում

				մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունային լուծումները կատարվի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը համապատասխան ըստ նպատակային նշանակության օգտագործման համար նախատեսված չափսային պահանջներին, ցանկալի է նաև ոտքերը կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Նմուշները մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Սահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կատարվի մակնշում, որում նշված լինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կատարվի հայերեն,

				թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГРОСС ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
7				